


75 Քարտեզի վրա ո՞ր ռասայի տարածման շրջաններն են պատկերված Ա տառով:

- 1) ավստրալոիդ
- 2) նեգրոիդ
- 3) մոնղոլոիդ
- 4) եվրոպեոիդ



76 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. 18° և արմ.երկ. 5°: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սեպտեմբերի 23-ին:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ է: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է: (Հաշվարկը կատարել 5°-ով):

77 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել օդի ջերմաստիճանը Լեռան գագաթին:

(79-80) Երկրի բնակչության թիվը 80 000, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1400, արտագաղթը՝ 600:

79 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

80 Որոշել երկրի բնակչության թիվը մեկ տարի անց:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չնոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ



1) Նկարում պատկերված է Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ.

- 1) սեպտեմբերի 23-ին
- 2) մարտի 21-ին
- 3) դեկտեմբերի 22-ին
- 4) հունիսի 22-ին

2) Երկու քաղաքներ գտնվում են նույն միջօրեականի վրա, նրանց միջև հեռավորությունը 50° է: Նրանց միջև իրական հռավորությունը կլինի.

- 1) 6660 կմ
- 2) 3330 կմ
- 3) 5550 կմ
- 4) 4440 կմ

3) Հասարակածի երկարությունը կազմում է.

- 1) 12000 կմ
- 2) 30076 կմ
- 3) 40076 կմ
- 4) 20067 կմ

4) Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Հյուսիսային և հարավային բևեռներն իրար միացնող երևակայական գիծը կոչվում է հասարակած:
- 2) Երկիրը Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:
- 3) Լոնդոն քաղաքը գտնվում է Երրորդ ժամային գոտում:
- 4) Երկրի միջին շառավիղը հավասար է 6371 կմ:

5) Երկրակեղևի և միջնապատյանի վերին կարծր շերտը միասին կոչվում է.

- 1) քարոլորտ
- 2) գեոսինկլինալ
- 3) պլատֆորմ
- 4) միջուկ

6) Մթնոլորտի երկրամերձ շերտում ջրային մանրագույն կաթիլների կուտակումը կոչվում է.

- 1) մառախուղ
- 2) ամպ
- 3) ցող
- 4) եղյամ


7) Այն սահմանային գիծը, որը իրարից է բաժանում հարևան գետերի ջրավազ ավազաններն, կոչվում է.

- 1) գետի թեքություն
- 2) գետի անկում
- 3) ջրբաժան գիծ
- 4) գետահովիտ

74

Կլիմայական քարտեզի վրա 4Ա, 4Բ, 4Գ թվերով պատկերված կլիմայական գոտին է.

- 1) մերձարևադարձային
- 2) բարեխառն
- 3) մերձհասարակածային
- 4) արևադարձային



- 69 Ինչն ընդհանուր է Տավուշի և Սյունիքի մարզերի համար.
- 1) Ուրբանիզացման մակարդակը բարձր է հանրապետության միջին ցուցանիշից
 - 2) Սահմանակից են Ադրբեջանին
 - 3) Ջարգացած է լեռնահանքային արդյունաբերությունը
 - 4) Ջարգացած է ծխախոտագործությունը

70 Ազգային պարկեր ունեցող մարզերն են.

- 1) Կոտայքը և Արմավիրը
- 2) Շիրակը և Վայոց ձորը
- 3) Արագածոտնը և Արարատը
- 4) Գեղարքունիքը և Տավուշը

71 Այլընտրանքային էներգառեսուրսների օգտագործմամբ հայտնի երկիր է.

- 1) Գերմանիան
- 2) Ուկրաինան
- 3) Չինաստանը
- 4) Իսլանդիան

72 Սնոգն առավել բնորոշ է.

- 1) Ժնևին
- 2) Վենետիկին
- 3) Լոնդոնին
- 4) Վաշինգտոնին

73 Բնական միջավայրի մոնիթորինգ է.


- 1) Շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտումը:
- 2) Բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումը և վերահսկումը:
- 3) Ցամաքի տարածքի որևէ տեղամասում միջավայրի առանձին տարրերի պահպանությունը:
- 4) Բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը:

8 Գետի անկումը 2400 մ է, երկարությունը՝ 800 կմ: Գետի միջին թեքությունը կլինի.

- 1) 8 մ/կմ
- 2) 2 մ/կմ
- 3) 4 մ/կմ
- 4) 3 մ/կմ


9 Ո՞ր տառով է նշված խառնարանը.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



10 Նկարում պատկերվածը ո՞ր կլիմայական գոտուն է բնորոշ.

- 1) մերձարևադարձային
- 2) բարեխառն
- 3) արկտիկական
- 4) հասարակածային



11 Անտարկտիդայի ափերը ողողող ծովերն են.

- 1) Բարենցի և Նորվեգական
- 2) Անունդսենի և Ռոսսի
- 3) Սպիտակ և Զյուսիսային
- 4) Կարայի և Բաֆինի

12 Տափաստանների զոնային բնորոշ բուսատեսակներ են.

- 1) փետրախոտը և սիզախոտը
- 2) եղևին և սոճին
- 3) կեչին և բոխին
- 4) կակտուսը և օշինդրը

13 Լեռնաշղթան ունի հյուսիս-հարավ ձգվածություն, եզերում է մայրցամաքը արևմուտքից: Թարգմանաբար նշանակում է «Պղնձե լեռներ»: Այդ լեռնաշղթան է.

- 1) Ուրալյանը
- 2) Ալպերը
- 3) Զինալայները
- 4) Անդերը

14 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Ժամանակավոր հոսք ունեցող գետերը Ավստրալիայում կոչվում են քրիկներ:
- 2) Եվրասիայի ամենաբարձր լեռը Մոնբլանն է:
- 3) Հարավային Ամերիկյան Անտարկտիդայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 4) Աֆրիկայում մնացորդային ծագում ունեն Նյասա և Տանգանիկա լճերը:

15 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Ըստ բարձրության մթնոլորտային ճնշումը նվազում է:
- 2) Մշտապես արևադարձերից հասարակած փչող քամիները կոչվում են բրիզներ:
- 3) Աֆրիկայի կլիմայի ձևավորման վրա մեծ է մուսսոնների ազդեցությունը:
- 4) Ավստրալիան ամենախոնավ մայրցամաքն է:

16 **«Լիճ-մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Բայկալ – Հյուսիսային Ամերիկա
- 2) Էյր - Եվրասիա
- 3) Չադ - Աֆրիկա
- 4) Տիտիկակա - Ավստրալիա

17 **«Ծոց-օվկիանոս» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Բիսկայան – Հնդկական
- 2) Բենգալական – Հյուսիսային Սառուցյալ
- 3) Գվինեական - Խաղաղ
- 4) Մեքսիկական – Ատլանտյան

18 **Միջագետքի դաշտավայրով հոսող գետեր են.**

- 1) Լենան և Օբը
- 2) Տիգրիսը և Եփրատը
- 3) Ամուդարյան և Սիրդարյան
- 4) Ինդոսն ու Գանգեսը

63 **Ընտրել միակ սխալ պատասխանը Մեծ Բրիտանիայի համար.**

- 1) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 2) Արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:
- 3) Առևտրական նավատորմն իր ջրատարողությամբ աշխարհում առաջատարներից է:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է :

64 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Հայկական լեռնաշխարհը միջին բարձրությամբ զիջում է Իրանական և Փոքրասիական բարձրավանդակներին:
- 2) Հայկական լեռնաշխարհը հարավից եզերում է Փոքր Կովկասը:
- 3) Արագածը և Նեմրուքը գործող հրաբուխներ են:
- 4) Ցայտուն արտահայտված է երիտասարդ հրաբխականությունը:

65 **« Լանդշաֆտային գոտի – հողային տիպ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) լեռնաանտառային - կուլտուր-ռոտոգելի հողեր
- 2) լեռնատափաստանային - լեռնային սևահողեր
- 3) անապատակիսանապատային - կարմրահողեր
- 4) մերձալպյան և ալպյան - դարչնագույն հողեր

66 **Ընտրել մարզերի և քաղաքների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.**

- | | |
|----------------|-------------|
| 1. Լոռի | ա. Սիսիան |
| 2. Սյունիք | բ. Մարտունի |
| 3. Գեղարքունիք | գ. Ալավերդի |
| 4. Տավուշ | դ. Դիլիջան |

- 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 2) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 4) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա

67 **Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացմանը նպաստել է.**

- 1) սննդի արդյունաբերության զարգացումը
- 2) աշխատանքային ռեսուրսների առկայությունը
- 3) հողային ռեսուրսների առկայությունը
- 4) ջրային ռեսուրսների առկայությունը

68 **Ընտրել ՀՀ գետերի ճիշտ շարքը՝ ըստ նրանց երկարությունների նվազման.**

- 1) Ախուրյան, Հրազդան, Քասախ, Ազատ
- 2) Հրազդան, Ախուրյան, Ազատ, Քասախ
- 3) Ազատ, Ախուրյան, Քասախ, Հրազդան
- 4) Ախուրյան, Քասախ, Հրազդան, Ազատ

57 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Օվկիանոսների հատակի մինչև 200 մ խորությունները կոչվում են մայրցամաքային ծանծաղուտ:
- 2) Շարժման սեփական միջոցներ ունեցող ջրային կենդանիները կոչվում են պլանկտոն:
- 3) Տեղատվությունը օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացման երևույթն է:
- 4) Ջրակայուն առաջին շերտի վրա տեղադրված ստորերկրյա ջրերը կոչվում են արտեզյան:

58 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը մեծ է հասարակածային շրջաններում:
- 2) Ցիկլոնը մթնոլորտային ցածր ճնշման մարզ է:
- 3) Ներքնոլորտում ըստ բարձրության օդի ջերմաստիճանը բարձրանում է:
- 4) Մթնոլորտային նորմալ ճնշումը հավասար է սնդիկի սյան 670 մմ:

59 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Արդյունաբերության բնորոշ է գծային տեղաբաշխումը:
- 2) Մեքենաշինության գիտատար ճյուղերը տեղաբաշխվում են մետալուրգիական բազաների մոտ:
- 3) Ծանր գունավոր մետաղների ձուլման ձեռնարկությունները տեղաբաշխվում են հումքային բազաների մոտ:
- 4) Մեքենաշինության մետաղատար ճյուղերը տեղաբաշխվում են գիտական կենտրոնների մոտ:

60 Մեռատարիքային բուրգը բնորոշ է.

- 1) Ռուսաստանին
- 2) Մեծ Բրիտանիային
- 3) Նիգերիային
- 4) ճապոնիային



61 Այդ պետությունը պետական կառավարման ձևով խորհրդարանական հանրապետություն է: Քրոնի պաշարներով աշխարհի առաջատար երկրներից է: Մայրաքաղաքը բնակչության թվով երկրորդ քաղաքն է: Այդ պետությունն է.

- 1) Իտալիան
- 2) Ֆրանսիան
- 3) Թուրքիան
- 4) Գերմանիան

62 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մեգալոպոլիսները և ագլոմերացիաները բնակավայրերի պարզ ձևեր են:
- 2) Ավստրալիան և Ռուսաստանը խտաբնակ երկրներ են:
- 3) Հինդուիզմը և բուդդիզմը ազգային կրոններ են:
- 4) Ջարգացող երկրներում բարձր է ուրբանիզացման աճի տեմպերը:

19 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Նեղոս գետը.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ

20 Քարտեզի վրա Ալժիր պետությունը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է




- 21 Բնակչության թվի կտրուկ աճը՝ ծնելիության բարձր մակարդակի պահպանման և մահացության էական կրճատման հետևանքով կոչվում է.
- 1) ժողովրդագրական ճգնաժամ
 - 2) ժողովրդագրական քաղաքականություն
 - 3) բնակչության վերարտադրություն
 - 4) ժողովրդագրական պայթյուն
- 22 Ընհանուր ծագմամբ, ժառանգաբար փոխանցվող արտաքին ֆիզիկական և մարդաբանական հատկանիշներով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խումբը կոչվում է.
- 1) ազգ
 - 2) ռասա
 - 3) աշխատանքային ռեսուրսներ
 - 4) էթնոս
- 23 Դա արդյունաբերության ճյուղերից է, աշխատատար է և գիտատար, որի պատճառով տեղաբաշխված է խոշոր քաղաքներում: Այդ ճյուղն է .
- 1) մետաղաձուլություն
 - 2) վառելիքային արդյունաբերություն
 - 3) սննդի արդյունաբերություն
 - 4) մեքենաշինություն
- 24 Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 120000կմ է, երկրի մակերեսը՝ 80000կմ²: Տրանսպորտային ցանցի խտությունը կլիմի.
- 1) 2.5 կմ/կմ²
 - 2) 1.5կմ/կմ²
 - 3) 4 կմ/կմ²
 - 4) 0.5 կմ/կմ²
- 25 «Ժողովուրդ-կրոն» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.
- 1) թուրքեր- բուդդայականություն
 - 2) ֆրանսիացիներ-քրիստոնեություն
 - 3) հրեաներ- հուդայականություն
 - 4) արաբներ - մահմեդականություն
- 26 «Պետություն – կառավարման ձև» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.
- 1) Հնդկաստան – միապետություն
 - 2) Սաուդյան Արաբիա - հանրապետություն
 - 3) Իտալիա - միապետություն
 - 4) Ֆրանսիա - հանրապետություն
- 27 «Պետություն - բուսաբուծության մասնագիտացման ճյուղ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.
- 1) Չինաստան – բրինձ
 - 2) Բրազիլիա - սուրճ
 - 3) Մեծ Բրիտանիա - բամբակենի
 - 4) ԱՄՆ - եգիպտացորեն

- 51 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Տարվա ընթացքում հասարակածի վրա կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ 90° է:
 - 2) Հայաստանի Հանրապետությունը գտնվում է հինգերորդ ժամային գոտում:
 - 3) Արեգակի ամենաբարձր դիրքը հորիզոնի նկատմամբ Երևանում լինում է հունիսի 22-ին:
 - 4) Տվյալ պահին միևնույն միջօրեականի բոլոր կետերում գրանցված ժամանակը կոչվում է գոտիական:
- 52 Որքա՞ն է հյուսիս-արևելյան կողմի ազիմուտը.
- 1) 225°
 - 2) 135°
 - 3) 90°
 - 4) 45°
- 53 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Օվկիանոսի ջրի միջին աղիությունը կազմում է 33 ‰:
 - 2) Երկրի մակերևույթով իր առաջացրած հունով ջրի մշտական հոսքը կոչվում է գետահովիտ:
 - 3) Ցունամիները առաջանում են մշտական քամիների ներգործությամբ:
 - 4) Ստորերկրյա ջրերի բնական ելքը երկրի մակերևույթ կոչվում է աղբյուր:
- 54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդությունը.
- 1) խիստ ցամաքային կլիմա - 100-200մմ - անապատ
 - 2) միջերկրածովային կլիմա - 500-600մմ - սավանա
 - 3) ծովային կլիմա - 700-800մմ - տափաստան
 - 4) մուսոնային կլիմա - 200-300մմ - անտառ
- 55 Կղզին կղզիախմբում առաջինն է իր մեծությամբ, այստեղ է գտնվում երկրի մայրաքաղաքը և աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը: Այդ կղզին է.
- 1) Ճավան
 - 2) Կալիմանտան
 - 3) Հոնսյուն
 - 4) Հոկայդոն
- 56 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Ալպերը ձևավորվել է Խաղաղօվկիանոսյան գետսինկլինալի տարածքում:
 - 2) Եվրասիայի որոշ տեղամասեր մտել են Գոնդվանայի կազմի մեջ:
 - 3) Հարավային Ամերիկայի մեծ մասը մտել է Լավրասիայի կազմի մեջ:
 - 4) Կովկասյան և Ուրալյան լեռներն ընկած են Ալպ-Հիմալայան գետսինկլինալի տարածքում:

49 Քարտեզի վրա Բազումի լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



50 Քարտեզի վրա Կապան քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

28 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Թեթև գունավոր մետաղների արտադրությունը էներգատար է:
- 2) Աշխարհի մեքենաշինական արտադրանքի կեսը թողարկում են զարգացող երկրները:
- 3) Նավթի գլխավոր արտահանող երկիրը Չինաստանն է:
- 4) Քիմիական արդյունաբերությանը յուրահատուկ է ցրված տեղաբաշխումը:

29 Բնակչության բարձր բնական աճը բնորոշ է.

- 1) Ռուսաստանին և Ֆրանսիային
- 2) Իրանին և Նիգերիային
- 3) Մեծ Բրիտանիային և Գերմանիային
- 4) Ռեկրահային և Թուրքիային

30 Դեպի ծով ելք չունեցող պետություններ են.

- 1) Չիլին և Արգենտինան
- 2) Ալժիրը և Սուդանը
- 3) Շվեյցարիան և Չեխիան
- 4) Ճապոնիան և Մոնղոլիան

31 «Պետություն-նավահանգիստ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Բրազիլիա – Ռոտերդամ
- 2) Ֆրանսիա – Մարսել
- 3) Ավստրալիա - Տոկիո
- 4) Հնդկաստան – Ռիգա

32 Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ունի ուրբանիզացման բարձր մակարդակ:
- 2) Ածխի և պողպատի արտադրությամբ աշխարհում առաջինն է:
- 3) Արդյունաբերության գլխավոր կենտրոնները գտնվում են արևմտյան մասում:
- 4) Տարածքի մեծությամբ աշխարհում առաջինն է:

33 100 մլն – ից ավել բնակչություն ունեցող երկրներ են.

- 1) Բրազիլիան և Արգենտինան
- 2) Կանադան և Մեքսիկան
- 3) Ճապոնիան և Ինդոնեզիան
- 4) Եգիպտոսը և Գերմանիան

34 Սուրճի մշակությամբ առաջատար երկրներ են.

- 1) Կոլումբիան և Բրազիլիան
- 2) Ֆրանսիան և Հունաստանը
- 3) Հնդկաստանը և Իրանը
- 4) Կանադան և Թուրքիան

35 Զայկական լեռնաշխարհի եզրային ծալքաբեկորավոր լեռնաշղթա չէ.

- 1) Արևելյան Տավրոսը
- 2) Զայկական Պարը
- 3) Փոքր Կովկասը
- 4) Արևելյան Պոնտոսը

36 Տրված «լեռնագագաթ - բարձրություն» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Նենրուֆ– 2250մ
- 2) Արագած - 4400մ
- 3) Սիփան - 5165 մ
- 4) Աժդահակ – 3597մ

37 ԶԶ-ում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը (- 46° C) նկատվել է.

- 1) Աշոցքի սարահարթում
- 2) Սևանի ավազանում
- 3) Արագած լեռնագանգվածում
- 4) Ապարանի դաշտում

38 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ԶԶ-ում ամենաշատ տեղումները թափվում են Արարատյան դաշտում:
- 2) ԶԶ տարածքի մոտ 82% - ը կազմում են հարթավայրերը:
- 3) Արաքսի ավազանին պատկանող գետերն ունեն սառցադաշտային սնում:
- 4) ԶԶ քաղցրահամ ջրի մեծ մասը կուտակված է Սևանա լճում:

39 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ԶԶ-ն ազգային կազմով միատարր երկիր է:
- 2) ԶԶ-ն բնակչության թվով գերազանցում է Ադրբեջանին և Թուրքիային:
- 3) ԶԶ բնակչության կեսից ավելին բնակվում են մինչև 1000մ բարձրություններում:
- 4) ԶԶ բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք:

40 Ոսկու հանքավայրեր են.

- 1) Արթիկը և Քաջարանը
- 2) Սոքքը և Մեղրաձորը
- 3) Շամլուղը և Կապանը
- 4) Ագարակը և Սվարանցը

41 ԶԶ ամենախոշոր ջրամբարն է.

- 1) Կեչուտի
- 2) Ախուրյանի
- 3) Ապարանի
- 4) Սպանդարյանի

42 ԶԶ խաղողագործության զարգացման հիմնական շրջանն է.

- 1) Լոռվա դաշտը
- 2) Շիրակի դաշտը
- 3) Սևանի ավազանը
- 4) Արարատյան դաշտը

43 ԶԶ ամենահզոր էլեկտրակայանն է.

- 1) Տաթևի ջրաէլեկտրակայանը
- 2) Վանաձորի ջերմաէլեկտրակայանը
- 3) Երևանի ջերմաէլեկտրակայանը
- 4) Զրազդանի ջերմաէլեկտրակայանը

44 Սպառվող վերականգնվող ռեսուրսներ են.

- 1) նավթը և քարածուխը
- 2) երկաթը և մանգանը
- 3) տուֆը և բազալտը
- 4) բույսերը և կենդանիները

45 Զողային ռեսուրսներով հարուստ երկիր է

- 1) Զայաստանը
- 2) Կանադան
- 3) Եգիպտոսը
- 4) Ճապոնիան

46 Զրերի մաքրման եղանակ չէ.

- 1) կենսաբանական
- 2) ֆիզիկաքիմիական
- 3) երկրաբանական
- 4) մեխանիկական

47 Մթնոլորտը առավելապես աղտոտվում է.

- 1) ջերմային էլեկտրակայաններից
- 2) ջերմաստիճանային շրջադասություններից
- 3) սանիտարական անտառահատումներից
- 4) ջրային էլեկտրակայաններից

48 Քարոլորտի վերին շերտի, մթնոլորտի ստորին շերտի, ամբողջ ջրոլորտի, կենսոլորտի և մարդոլորտի միասնությունը կոչվում է

- 1) աշխարհագրական գոտի
- 2) բնական զոնա
- 3) մայրցամաք
- 4) աշխարհագրական թաղանթ